AMERICAN UNIVERSITY OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության
Բնության և շրջակա միջավայրի
պահպանության Նախարար
պարոն **Ս. Ավետիսյանին**

Մեծարգո պարոն նախարար՝

Պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ մեր համալսարանի Շրջակա միջավայրի կառավարման կենտրոնում շուրջ վեց ամիս է կատարվում են բնական և մարդածին ամենատարբեր գործողությունների և երևույթների հետ կապված ռիսկի ընկալման գնահատականների վիճակագրական ուսումնասիրություններ:

Այդ աշխատանքների արդյունքում մենք ստացել ենք հասարակական տարբեր խմբերի կողմից ռիսկի ընկալման դասակարգումներ: Վերլուծության ընթացքում ստացվել են տվյալներ, որոնք վկայում են այն մասին, որ հասարակության ամենատարբեր խմբերը էկոլոգիական բնույթի պրոբլեմների շարքում առաջին տեղն են հատկացնում միջուկային ռեակտորների վթարների ռիսկին: Հաջորդ առավելագույն գնահատվող ռիսկը արդեն տարբեր խմբերում միարժեք չէ: Մասնավորապես, Բնության և շրջակա միջավայրի պահպանության նախարարության աշխատակիցները համարում են, որ դա ջրամբարներն են:

Հաշվի առնելով վերը շարադրվածը մեր կենտրոնի առջև խնդիր է դրվում ավելի խորը ուսումնասիրել այդ երկու պրոբլեմների նկատմամբ կառավարման համակարգերը:

Նշված աշխատանքները կատարելու համար մենք կարիքը ունենք Ձեր օգնության, և խնդրում ենք Բնության և շրջակա միջավայրի Նախարարության և Հայաստանի Ամերիկյան Համալսարանի միջև համագործակցության շրջանակներում տեղեկություններ տալ ներկայումս գործող (կամ ապագայում նախատեսվող) միջուկային և ատոմային տեխնիկայի հետ կապված պետական կառավարման (այդ թվում պետական և գերատեսչական վերահսկողության) համակարգի վերաբերյալ:
Կից ներկայացնում ենք տեղեկանք:

Ընդունեք իմ խորին
հարգանքի հավաստիքը:

Պրոռեկտոր

Միքայել Քուշակճեան

40 Marshall Bagramian Street
Yerevan, 375019, Armenia
Tel. Int'l. 011-7-885-2-15-10-49 Local 27-33-67
Fax 0-11-7-885-2-15-10-48

300 Lakeside Drive, 22nd Floor
Oakland, California 94612
Tel. (510) 987-9452